

է հայկական հարցի մասին՝ «History of the Armenian Question to 1875», տպած իլինոյիսի համալսարանի հոգածութեամբ, Ուրբանա քաղաքում։ Եր և կուսն էլ անգլիերէն լեզով։

Մ. Յ. Սէրի գործը 629 էջոց մանրակրիտ ուսումնասիրութիւն է հնդկահայոց մասին՝ հարուստ բազմակողմանի նոր ու հետաքրքրական նիւթերով։ Գիրքը բաղկացած է յառաջարանից, 47 գլխից եւ մի յաւելյածից։ Յառաջարանում կան տեղեկութիւններ գործի բընյայի մասին, ապա գլուխ առ գլուխ տրւած է Ազքայի, Կուալիորի, Ֆարուլի, Սուռարի, Բուրեկի, Զինսուրանի, Չանդենազրի, Սայիդարանի, Մոնղիրի, Կալկարայի, Լուլսնովի, Դակայի, Մադրասի հայոց պատմութիւնը։ Առանձին գլուխներ յատկացած են երեւելի հնդկահայ դէմքերի՝ յայտնի պետական գործիչներ Միրզա Զուլ – Քէրմէյնը եւ Մարկոս էրիզադը, կամ նշանաւոր դիւտիսագէտներ Խոչա Խարայէլ Շահադը, Մարգար Աւազ Շիմէնցը եւ Խոչա Պետրոս Արութիւնը, ականաւոր զինուրականներ Գուրգէն Խամը եւ զնդապիտ

Յակովը Պետրոսը, կամ, վերջապէս, Միրզա Զուլ – Քէրմէյն ու Սարմադ բանաստեղծները եւ այլն։ Յաւելյածի մէջ առաջ են բերւած Զենոպ Գլակի տեղեկութիւնները Հնդկաստանի մասին։ Մենք դեռ առիր կունենանք խօսելու Մ. Յ. Սէրի այս շահեկան գործի մասին։

Ա. Սարգսեանի աշխատութիւնը բաղկացած է մի ներածութիւնից, եօրը զըլուխներից եւ օգտագործւած աղբիւրների ընդարձակ ցանկից։ Ներկայացւած են հայկական հարցին ծնունդ տուղ պատմառները, հայկական հարցի ծագումն ու գարգացումը, Բերլինի վեհաժողովի հանգամանենքներն ու գաղտնի դիւտիսագիտութեան դերը եւ բարենորոգումների ծրագիրներն ու փորձերը մինչև 1885 թ.։ Այս բականը մի սահմանագիծ է որ բաժանում է հայկական հարցի գուտ դիւտիսագիտական շրջանը յեղափոխական շրջանից։ Ա. Սարգսեանը օգտագործել է հայերէն եւ օսուր լեզուներով գոյութիւն ունեցող բազմարի, երեք հարիւրից աւելի երատարակութիւններ։ Այս գործի մասին էլ այսի խօսի «ՎէՄ»-ում աւելի հանգամանօրէն։

### ՏԱՐԵԳԻՐՔ ՔՂԻԻ ՀԱՅՐԵՆԱԿՑ . ՄԻՈՒԹԵԱՆ

Հիւս. Ամերիկայի Տիտրոյիտ քաղաքում է լոյս տեսել այս տարեգիրքը – մի նոր մշակութային վայր, ուր հայ տպարան է հիմնած։ 190 էջոց հասուրում արւած են տեղեկութիւններ Քդիի շրջանի անցեալ կեանքի զանազան կողմերի մասին – տեղագրութիւն, տպագրութիւն, բանահիւսու-

թիւն, մշակոյք, դէպֆեր, դէմքեր, ինքնապաշտպանութեան կոիւներ, բարեգութեան կենցաղ – մի խօսելով Քդին ու քղեցին իր անցեալով։ Հատորում կամ նըկաբներ, բարտէս եւ ձայնագրաւած երգեր։ Եթե փորձ հետաքրքրական եւ շընորհաւորելի գործ է։

